ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

(օրենքը խմբ. 17.12.25 ՀՕ-484-Ն)
(17.12.25 ՀՕ-484-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական պարտքի հետ կապված, ինչպես նաև հանրային հատվածի պարտքի հրապարակայնությանն առնչվող հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
1) **պարտքային պարտավորություն**՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործիքներով ստացված և որոշակի պահի դրությամբ չմարված գումար, ներառյալ սահմանված ժամկետում չվճարված տոկոսագումարը.
2) **պետական պարտք**՝ Հայաստանի Հանրապետության անունից Կառավարության և Հայաստանի Հանրապետության համայնքների (այսուհետ՝ համայնքներ) անունից տեղական ինքնակառավարման մարմինների ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների համախմբված (առանց Կառավարության և համայնքների միջև, ինչպես նաև միջհամայնքային պարտքային պարտավորությունների) հանրագումարը.
3) **կառավարության պարտք**՝ Կառավարության ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.
4) **համայնքների պարտք**՝ տեղական ինքնակառավարման մարմինների ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.
5) **պետական ներքին պարտք**՝ ռեզիդենտների հանդեպ Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների համախմբված (առանց Կառավարության և համայնքների միջև, ինչպես նաև միջհամայնքային պարտքային պարտավորությունների) հանրագումարը.
6) **պետական արտաքին պարտք**՝ ոչ ռեզիդենտների հանդեպ Կառավարության ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.
7) **հանրային հատվածի պարտք**՝ պետական պարտքի և հանրային հատվածի ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների համախմբված (առանց միմյանց նկատմամբ պարտքային պարտավորությունների) հանրագումարը.
8) **պետական պարտքի կառավարում՝** գործընթաց, որն իրականացվում է փոխառու միջոցների ներգրավման, վերաձևակերպման, մարման և սպասարկման ծրագրերի մշակման և իրականացման միջոցով՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված նպատակների շրջանակում.
9) **պարտքի մարում**՝ պարտքային պարտավորության կատարում.
10) **պարտքի սպասարկում**՝ պարտքային պարտավորությամբ նախատեսված մարում, տոկոսագումար, տուժանք, կոմիսիոն վճար, պարտավորության վճար և այլ վճարներ.
11) **լիազոր մարմին**՝ հանրային ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմին.
12) **հանրային հատվածի ոչ ֆինանսական կազմակերպություն**՝ 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ ոչ ֆինանսական առևտրային կազմակերպություն.
13) **հանրային հատվածի ֆինանսական կազմակերպություն՝** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված՝ ֆինանսների բնագավառում գործող պետական և համայնքային կազմակերպություն և 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ ֆինանսական առևտրային կազմակերպություն.
14) **ռեզիդենտ**՝ ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքով սահմանված նշանակության.
15) **ոչ ռեզիդենտ**՝ ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքով սահմանված նշանակության.

16) **պետական գանձապետական պարտատոմս**՝ Հայաստանի Հանրապետության անունից լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ազգային արժույթով թողարկվող պետական պարտատոմս.

17) **արտարժութային պարտատոմս**՝ Հայաստանի Հանրապետության անունից լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտարժույթով թողարկվող պետական պարտատոմս.

18) **համայնքային պարտատոմս**՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային արժույթով թողարկվող պարտատոմս.

19) **առաջնային տեղաբաշխում**՝ թողարկողի կամ նրա հանձնարարությամբ այլ մարմնի կողմից թողարկողի պարտատոմսերի առաջին օտարումը շուկայի մասնակիցներին.

20) **առաջնային շուկա**՝ շուկա, որտեղ իրականացվում է թողարկողի պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումը.

21) **պարտավորությունների կառավարման գործառնություններ**՝ բոլոր այն գործառնությունները, որոնք իրականացվում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործիքներով՝ պարտքի կառուցվածքը փոխելու և դրա կազմը բարելավելու, այդ թվում՝ մարման գրաֆիկը հարթեցնելու համար.

22) **պայմանական պարտավորություն**՝ Հայաստանի Հանրապետության պարտավորություն, որի կատարումը պայմանավորված է դրանց հիմքում ընկած պայմանների կամ դեպքերի տեղի ունենալով:

2. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում կիրառվող հասկացությունները սույն օրենքում կիրառվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում կիրառվող իմաստով, եթե սույն օրենքի դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

Հոդված 3. Կառավարության պարտքի սահմանային շեմը

1. Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի և Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի հարաբերակցության սահմանային շեմը 60 տոկոս է, որը գերազանցելու դեպքում գործում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8.2-րդ մասի «գ» կետով և 8.4-րդ մասի «բ» կետով սահմանված դրույթները:

2. Եթե կառավարության պարտքը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցել է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա գործում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8.2-րդ մասի «բ» կետով և 8.4-րդ մասի «ա» կետով սահմանված դրույթները, իսկ 40 տոկոսը գերազանցելու դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8.2-րդ մասի «ա» կետով սահմանված դրույթները:

ԳԼՈՒԽ 2

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված 4. Պետական պարտքի կազմը

1. Պետական պարտքի բաղադրիչներն են պետական ներքին պարտքն ու պետական արտաքին պարտքը: Պետական պարտքի բաղադրիչներից բխող դրամական պարտավորություններն ունեն նույն գերակայությունը:

2. Պետական պարտքը, ըստ թողարկման և մինչև մարում ժամկետայնության, լինում է կարճաժամկետ (մինչև 1 տարին ներառյալ), միջնաժամկետ (1-5 տարին ներառյալ) և երկարաժամկետ (5-ից ավելի տարով):

Հոդված 5. Պետական պարտքի ձևավորման գործիքակազմը

1. Պետական պարտքի ձևավորման գործիքներն են՝

1) ֆինանսական և վարկային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, վարկավորող բազմակողմ հաստատությունների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված փոխառության կամ վարկային պայմանագրերը.

2) պետական գանձապետական, արտարժութային և համայնքային պարտատոմսերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտքի փոխանցման գործարքի հետևանքով որպես պետական պարտք վերաձևակերպված երրորդ անձանց պարտավորությունները.

4) պետական պարտքի վերաձևակերպման պայմանագրերը.

5) պայմանական պարտավորությունը պարտքային պարտավորություն ձևակերպելու գործարքները:

2. Եթե պարտապանը, որի համար տրվել է բյուջետային երաշխիք, սահմանված ժամկետում չի կատարում իր պարտավորությունը, և պարտատերը պահանջում է բյուջետային երաշխիքի կատարում, ապա երաշխավորված և սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունները ձևակերպվում են որպես Կառավարության պարտքային պարտավորություն:

3. Պայմանական պարտավորությունը (բացառությամբ բյուջետային երաշխիքի) ներառվում է պետական պարտքի մեջ, եթե տեղի են ունենում պայմանական պարտավորության հիմքում ընկած դեպքերը կամ պայմանները: Կառավարության պայմանական պարտավորության հիմքում ընկած դեպքերը կամ պայմանները տեղի ունենալու ժամանակ դրանք ձևակերպվում են որպես Կառավարության պարտքային պարտավորություն: Համայնքի պայմանական պարտավորության հիմքում ընկած դեպքերը կամ պայմանները տեղի ունենալու ժամանակ դրանք ձևակերպվում են որպես համայնքի պարտքային պարտավորություն:

Հոդված 6. Պայմանական պարտավորությունների կազմը

1. Պայմանական պարտավորությունները ներառում են՝

1) բյուջետային երաշխիքները.

2) պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում մասնավոր հատվածի հանդեպ ստանձնած պայմանական պարտավորությունները:

Հոդված 7. Պետական պարտքի ներգրավման նպատակները

1. Պետական պարտքի ներգրավման նպատակներն են՝

1) պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը և ընթացիկ իրացվելիության ապահովումը կամ համայնքների բյուջեների ֆոնդային մասի դեֆիցիտի ֆինանսավորումը.

2) պետական ներքին պարտքի շուկայի պահպանումը և զարգացումը.

3) պետական պարտքի վերաֆինանսավորումը.

4) պետական բյուջեից վարկավորումը.

5) կայունացման հաշվի միջոցների համալրումը:

ԳԼՈՒԽ 3

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 8. Պետական պարտքի կառավարման նպատակները

1. Պետական պարտքի կառավարման հիմնական նպատակը միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում Կառավարության և համայնքների ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության և վճարային պարտավորությունների կատարման ապահովումն է հնարավոր նվազագույն ծախսերով և պարտքի կառուցվածքի ռիսկերի խելամիտ մակարդակի պայմաններում:

2. Պետական պարտքի կառավարման նպատակներ են՝

1) կառավարության և համայնքների պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը.

2) պետական պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականությունների համակարգումը, այդ թվում՝ դրա շրջանակում վճարային հաշվեկշռի աջակցությունը և պահուստների համալրումը:

Հոդված 9. Պետական պարտքի կառավարման գործիքները

1. Պետական պարտքի կառավարման նպատակների իրագործումն ապահովելու համար լիազոր մարմինը և տեղական ինքնակառավարման մարմինները կիրառում են ֆինանսական շուկաներում ընդունված պարտքի կառավարման գործիքներ, այդ թվում՝ պարտքի վերաձևակերպում, վերակառուցում, հետգնում, փոխանակում, սվոփ և այլն:

Հոդված 10. Պետական պարտքի կառավարման սկզբունքները

1. Պետական պարտքի կառավարումն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա.

1) թափանցիկություն՝ պետական պարտքի կառավարման նպատակադրումների և քաղաքականությունների հստակ սահմանում և բացահայտում.

2) հաշվետվողականություն՝ պետական պարտքի կառավարման վերաբերյալ հաշվետվողականություն օրենսդիր մարմնի և հանրության առջև.

3) կանխատեսելիություն՝ պարտավորությունների կառավարման գործառնությունների (այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավման և սպասարկման) թափանցիկություն և կանխատեսելիություն.

4) հրապարակայնություն՝ պետական պարտքի և պարտավորությունների կառավարման

գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների ժամանակին, պատշաճ կերպով և ամբողջ ծավալով բացահայտում և դրանց հանրային հասանելիություն:

Հոդված 11. Պետական պարտքը կառավարող մարմինները

1. Կառավարության պարտքային պարտավորության ստանձնումն ու կառավարումն իրականացնում է լիազոր մարմինը, համայնքների պարտքային պարտավորության ստանձնումն ու կառավարումը՝ տեղական ինքնակառավարման մարմինները:
2. Տեղական ինքնակառավարման մարմինները պարտքային պարտավորություն ստանձնում են լիազոր մարմնի համաձայնությամբ: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պարտքային պարտավորություն ստանձնելու համաձայնության տրամադրման կարգը սահմանում է լիազոր մարմինը:
3. Լիազոր մարմինն իրականացնում է կառավարության պարտքի գրանցում, հաշվառում և պատասխանատու է այդ հաշվառման հավաստիության համար: Կառավարության պարտքի գրանցման և հաշվառման կարգը սահմանում է լիազոր մարմինը:
4. Տեղական ինքնակառավարման մարմինները համայնքի ավագանու սահմանած կարգով իրականացնում են համայնքների պարտքի գրանցում, հաշվառում և պատասխանատու են այդ հաշվառման հավաստիության համար:

Հոդված 12. Պետական պարտքի կառավարման աուդիտը

1. Պետական պարտքի կառավարման արտաքին աուդիտն իրականացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով սահմանված կարգով:
2. Պետական պարտքի կառավարման ներքին աուդիտն իրականացվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 4

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հոդված 13. Կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությունը

1. Կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությունը ծրագիր է, որը Կառավարությունն իրականացնում է միջնաժամկետ հատվածում՝ կառավարության պարտքի ցանկալի կառուցվածքի հասնելու նպատակով: Այն մշակվում և վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա երեք տարիների համար:
2. Կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությունը ներառվում է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում և հաստատվում է Կառավարության կողմից:
3. Կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությունը ներառում է կառավարության պարտքի ուղենշային ցուցանիշները, նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները, պարտքի կառուցվածքի և հնարավոր ռիսկերի գնահատականը:
4. Կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությունը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում:

Հոդված 14. Փոխառությունների տարեկան ծրագիրը

1. Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքի ընդունումից հետո՝ 20-օրյա ժամկետում, լիազոր մարմինը մշակում և իր պաշտոնական կայքէջում հրապարակում է փոխառությունների տարեկան ծրագիրը, որով ներկայացվում է փոխառու միջոցների հաշվին տվյալ տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծավալներն ու կառուցվածքը, գործիքակազմը, պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույցը, կառավարության պարտքի սպասարկումը և պարտքը բնութագրող այլ ցուցանիշներ:

ԳԼՈՒԽ 5

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՊԱՐՏՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 15. Պետական պարտքի հրապարակայնությունը

1. Պետական պարտքը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով: Այն կարող է հրապարակվել նաև այլ արժույթներով:
2. Լիազոր մարմինը պատրաստում և մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը իր պաշտոնական

կայքէջում հրապարակում է տվյալ տարվա պետական պարտքի մասին տարեկան հաշվետվություն, որը պարունակում է տեղեկություններ պետական պարտքի ծավալի, կառուցվածքի, տարվա ընթացքում կատարված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև կառավարության պարտքի կառուցվածքի ռիսկերի և կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությամբ ամրագրված ուղենշային ցուցանիշների կատարման վերլուծություններ:

3. Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո լիազոր մարմնի և տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմին են ներկայացնում համայնքների պարտքի վերաբերյալ տեղեկատվություն, իսկ վերջինս ամփոփում է այդ տեղեկատվությունը և ներկայացնում լիազոր մարմին:

4. Լիազոր մարմինը յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ 15-օրյա ժամկետում, պատրաստում և իր պաշտոնական կայքէջում հրապարակում է կառավարության պարտքի ամսական վիճակագրական տեղեկագիր, որը պարունակում է տեղեկություններ կառավարության պարտքի ծավալի, կառուցվածքի, ինչպես նաև կառավարության պարտքի կառուցվածքի ռիսկերի և այլ ցուցանիշների վերաբերյալ:

5. Լիազոր մարմինը յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ 40-օրյա ժամկետում, պատրաստում և իր պաշտոնական կայքէջում հրապարակում է պետական պարտքի ամսական վիճակագրական տեղեկագիր, որը պարունակում է տեղեկություններ պետական պարտքի ծավալի, կառուցվածքի, ինչպես նաև կառավարության պարտքի կառուցվածքի ռիսկերի և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Հոդված 16. Հանրային հատվածի պարտքի հրապարակայնությունը

1. Հանրային հատվածի ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունները լիազոր մարմին են ներկայացնում իրենց պարտքային պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, որոնց տրամադրման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

2. Լիազոր մարմինը իր սահմանած կարգով իր պաշտոնական կայքէջում հրապարակում է հանրային հատվածի պարտքի վերաբերյալ տեղեկագիր, որը պարունակում է տեղեկություններ առնվազն հանրային հատվածի պարտքի ծավալի և կառուցվածքի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՈՒՄԸ

Հոդված 17. Պետական պարտքի աղբյուրները

1. Պետական պարտքի աղբյուրներն են՝

1) ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների ձեռք բերած պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական միջոցները.

2) ռեզիդենտների ձեռք բերած համայնքային պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական միջոցները.

3) ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից Կառավարությանը տրամադրված փոխառությունները և վարկերը.

4) ռեզիդենտների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրված փոխառությունները և վարկերը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտքի փոխանցման գործարքի հետևանքով ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հանդեպ որպես պետական պարտք վերաձևակերպված երրորդ անձանց պարտավորությունները.

6) ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հանդեպ պետական պարտքի վերաձևակերպման պայմանագրերը.

7) ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների նկատմամբ պայմանական պարտավորությունները պետական պարտք ձևակերպելու գործարքները:

Հոդված 18. Կառավարության պարտքի սպասարկումը

1. Կառավարության պարտքի սպասարկման ենթակա գումարները վճարվում են ամբողջությամբ և ժամանակին: Եթե տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցները բավարար չեն կառավարության պարտքի սպասարկման համար, ապա կառավարության պարտքի սպասարկման ենթակա վճարումները կատարվում են ամբողջ ծավալով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով ավելացնելով պարտքի սպասարկման համար նախատեսված միջոցները՝ տվյալ տարվա պետական բյուջեի եկամուտների, ծախսերի կամ դեֆիցիտի փոփոխության միջոցով:

Հոդված 19. Պետական պարտքի մարումը

1. Պետական պարտքը համարվում է մարված, եթե կատարվել են համապատասխան պայմանագրերով նախատեսված բոլոր վճարումները, կամ վճարման պարտավորությունը դադարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև պայմանագրով նախատեսված պարտավորության դադարման այլ հիմքերով:
2. Լիազոր մարմինը և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են վաղաժամկետ կատարելու իրենց պարտքային պարտավորությունները, եթե համապատասխան պայմանագրով դա արգելված չէ:

ԳԼՈՒԽ 7

ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

Հոդված 20. Կառավարությանը տրվող փոխառու միջոցները

1. Հայաստանի Հանրապետության անունից ռեզիդենտների հետ փոխառության կամ վարկային պայմանագիր կնքելու իրավասություն ունի միայն լիազոր մարմինը:
2. Ռեզիդենտներից փոխառություններ և վարկեր կարող են ներգրավվել պետական գանձապետական պարտատոմսերի՝ փոխառության կամ վարկային պայմանագրի ստորագրման օրվան նախորդող 5-րդ օրվա եկամտաբերության կորի նույն ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունից ոչ բարձր տոկոսադրույքով:
3. Վարկային միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո լիազոր մարմինն իրավասու է պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով պարտքի կառուցվածքի ռիսկերի կառավարման շրջանակում կատարելու վարկի պայմաններով նախատեսված ֆիքսված և լողացող տոկոսադրույքների փոփոխություն, վարկի արժույթի փոփոխություն և վարկային միջազգային պայմանագրով կամ վարկի տրամադրման ընդհանուր ֆինանսական պայմանների վերաբերյալ այլ փաստաթղթով ամրագրված այլ փոփոխություն:

Հոդված 21. Պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի թողարկումը

1. Հայաստանի Հանրապետության անունից պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսեր թողարկելու բացառիկ իրավունքը պատկանում է լիազոր մարմնին:
2. Շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի և համայնքային պարտատոմսերի թողարկման պայմաններում փոփոխություններն արգելվում են:
3. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, պարտավորությունների կառավարման գործառնությունների և մարման կարգերը հաստատում է Կառավարությունը:
4. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտարժութային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, պարտավորությունների կառավարման գործառնությունների և մարման գործընթացներին առնչվող փաստաթղթերն ստորագրում է լիազոր մարմնի ղեկավարը:

Հոդված 22. Պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների ընտրությունը

1. Լիազոր մարմինը սահմանում է պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման և ընտրության կարգը և դրան համապատասխան ընտրում է առաջնային շուկայի մասնակիցներին: Լիազոր մարմինն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման և ընտրության չափանիշները և արդյունքները:
2. Կենտրոնական բանկը լիազոր մարմնի հետ համաձայնեցված կարգով լիազոր մարմնին տրամադրում է պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի մասնակիցների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի հիման վրա Կենտրոնական բանկին տրամադրված պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների ընտրության չափանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Լիազոր մարմնին տրամադրվող տեղեկատվությունը չի կարող պարունակել բանկային գաղտնիք:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ս. Սարգսյան**

2008 թ. հունիսի 18
Երևան
ՀՕ-78-Ն